

15543

Университет в
г. С.-Петербург

321.7

9-20

1919

26 SEP 2006

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ. ԶԵՆԵՐԱՏ. ԵՐԿՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏ.

15 JAN 2017

Գրությունները բոլոր երկրներին միացված

IMH
7-20

Ա. ՊԱՆՆԵԿՈՒԿ.

ԿՈՄՍՈՒՆԻԶՄ ԵՒ ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄ

321.7
Պ-20

ՀՐԱՏԱՐԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵՐԻ ԱՍԻ

№ 35

ՄՈՍԿՎԱ—1919.

07.02.2013

15543

~~11/11~~
~~11-20~~
3217
11-20

ԵՐԿՈՒ ԽՕՍԳ:

Ա. Պանկուկը հուանդական ձախակողմեան սոցիալ-դեմոկրատիայի լայննի ներկայացուցիչներեց մէկն է: Նրա գրքոյկը նշանակալից է այն կողմից, որ ցուցադրում է բոլշևիզմի մեծ ազդեցումը ժամանակակից սոցիալիզմի վրայ: Մեր սոցիալ-հայրենասերներն և մանաւանդ մենշեիկներն այժմ էլ սիրում են պնդել, որ բոլշևիզմը դուռ-ուռական մի հոսանք է: Ֆրանք հաւատացած են, որ բոլշևիզմը կմնայ միշտ որպէս տեղական մի շարժում, ուռական մի աղանդ: Սակայն այդպէս չէ իրապէս: Այսօր ամենուրեք, աշխարհի բոլոր վայրերում և երկրագնդի բոլոր ծայրերում բոլշևիզմը դառել է հզորագոյն մի հոսանք: Ամենուրեք հնչում է սոցիալիստական ձախատածարի ահագանգը: Անգլիայում, Ամերիկայում, Իտալիայում և Ֆրանսիայում կազմել են արդէն խոշոր հատւածներ Երրորդ Կոմմունիստական այն ինտերնացիոնալի որը գումարել է Ռուսական Խորհրդային Հանրապետութեան կարմիր ժայռաբաղաջում: Ժողովրդական մասսաներն այդ երկրներում համոզել են վերջնականապէս, որ գեմոկրատական պարլամենտներն իրապէս բուրժուազիայի հետար յարմարաբոյն գէշեր են, որոնց օգնութեամբ նա խարում է բնակչոյրին և կերակրում աշխատաւորներին պէն լոյսերով: Այդ կողմն յառ հետաքրքրական էին այն բնութեմիւններն, որ տեղի ունեցան մի քանի ամիս առաջ Ֆրանսիայում: Ֆրանսիական սոցիալ-հայրենասերներն՝ աշակողմեան սոցիալիստները խորապէս հաւատացած էին, որ Ֆրանսիական «դեմոկրատիան» գէթ մի անգամ երես կդարձնէ բոլոր

1907

1568

4331

1280-92



Տպարան՝ Կենտր. Հանրակ. Կոմիտատ, Մոսկւա, Արմենակի Գ. Գ. 3
Типография Центрального Армянского Комисариата, Москва, Армянский пер. 3



ազգայնականներից լետադիմականներից ու կնտրէ արմատական մի մեծամասնութիւն: Ոգևորած այդ հեռանկարներով չափաւոր սոցիալիստները կուսի են կոմմունիստների գէմ և մեծ եւանդով կոչել են մասսաները մասնակցելու ընտրութիւններին: Դրանցից շատ շատերը նոյն իսկ պնդել են, որ նոր բարձրագույն պարլամենտը կհրովայ ժողովրդի մասին և կբարեխաւէ պրոլետարիատի ծանր կացութիւնը: Սակայն այդ յույսերն չիրականացան: Ընտրութիւնների ընկացքում բուրժուական կուսակցութիւնները չմոռացան ոգուել իրենց մեղքում եղած հնարաւորութիւններից և զենքերից: Դրանք հանդէս եկան ամենամեծ և խոշոր խոստումներով: Եւ ինչպէս միշտ, այդպէս և այժմ լազմանակը տարան հէնց այդ բուրժուական ճոխները:

Բուրժուազիան և բուրժու ունեւոր ասորները մտազայ սոցիալիստական լեղափոխութեան ստւերից սարսափահար ընկան ուճակցիայի գիրկը: Դրանց հետեցին նաև մանր-բուրժուական տարրերը: Ամենաբնորոշը այն էր, որ ժողովրդական տարրերը ջնն մասնակցել ակտիւ կերպով ընտրութիւններին: Բուրժուական ռադիոն հալորդում է, որ մի շարք քաղաքներում ընտրութիւններին մասնակցել է ընտրողների ամենշատ մասը: Ըստ երևույթին բանտրական տարրերը դիտաւորութեամբ չեն մասնակցել ընտրութիւններին: Սակայն ամենապարեզն այն է, որ նոր պարլամենտը լինելով իր կազմով աջակողման՝ անհրաժեշտաբար պիտի մերկացնէ իր իսկական, բուրժուա-կապիտալիստական էութիւնը: Այժմ արդէն ժողովրդական ամենալայն մասսաները կարող են ծանօթանալ բուրժուազիայի իրական բնոյթին և զործնյակերպի հետ: Իզուր չէ Ֆրանսիական մի լրագիր ասել, որ նոր պարլամենտի գործունէութիւնը վերջին հաշուով պէտք է լեղափոխականացնէ ֆրանսիական բանտրներին: Դրանով պիտի բացատրել այն, որ ներկայումս ֆրանսիական

սոցիալիստների շրջանում կոմմունիզմը դառնէ է ամենաուճեղ հոսանքներից մէկը:

Ամենաուճեղ ֆրանսիական մասսայական կազմակերպութիւնը, այսպէս կոչւած «Սշխատանքի Ընդհանուր Կոնֆեդերացիան» ներկայումս պատրաստում է իր շարքերը վճռական թակաւարտի համար: Նոյնը նկատում ենք մենք նաև Լրոպական միւս երկրներում: Ամենուրէր մասաները ոտքի են ելել և այլևս ոչ մի սոցիալ-հայրենասիրական կոչ չի կարող լափանել սոցիալիստական մեծ շարժման արշաւը: Ահա ինչու այսօր սոցիալիզմի ամենաակաւաւոր ներկայացուցիչները և նոյնիսկ մանր-բուրժուական հովերով տողորած մի շարք զեղազետներ մեծ համակերանքով են վերաբերում Ռուսական Խորհրդային Հանրապետութեան: Անասուլ Ֆրանս և Ռոմեն Ռոլլանը միշտ հետու են եղել պրոլետարական սոցիալիզմից: Սակայն այսօր այդ երկուսն էլ իրենց յողաճներում ողջունում են Խորհրդային Ռուսաստանը... Մենք դիտաւորութեամբ չենք լիջում այստեղ հետեղական սոցիալիստների անունները: Դրանց կարծիքների վրայ մենք առիթ կունենանք կանգնելու ասելի մանրամասն: Պանեկուկի բրոշուրը հէնց այդ սոցիալիստների կարծիքներն է արտայայտում: Այդ պատճառով մենք կաբեւոր համարեցինք հրատարակել ամենից առաջ «Կոմմունիզմ և Դեմոկրատիզմ» յօլաւը: Յետագայ գրքոյկների մէջ կտպին եւրոպական միւս սոցիալիստների յողաճները:

ԿՈՄՄՈՒՆԻՉՄ ԵՒ ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄ

Դեմոկրատիայի խնդիրը ժամանակակից ամենավիճելի խնդիրներից մէկն է:

Դեմոկրատիա՝ ասելով հասկացում է ժողովրդական իշխանութիւնը՝ ժողովուրդը ինքն իրեն պէտք է կառավարի. նրան չպէտք է կառավարեն ուրիշները: Նա պէտք է ինքը վճռի իր բախաբ. եթէ դա բնգունենք բառացի կերպով այդ պարագայում զա՛ կատարելագէս անիրագործելի է:

Գոյութիւն չունի ոչ մի ժողովուրդ որն ինքն վարի իր սեփական գործերը քանի որ ամեն մի ժողովուրդ բաժանւած է զօտակարգերի. շահագործողներն ու բանուորներն սուր կերպով կանգնած են միմեանց դէմ: Այդ երկու զօտակարգերը ընդհանուր շահեր չունեն: Միացեալ ընդհանուր կամք նրանք չունեն: Եւ եթէ դեմոկրատիայի իրական պրինցիպների համաձայն բանուորներն ու բուրժուազիան պարլամենտներում ներկայացւած լինեին համեմատ իրենց քանակի,

այդ պարագայում միթէ՛ նրանք կարող էին մի-
աօին երկիրը կառավարել: Երբ մենք ժողովրդի
մասին խօսում ենք, մենք նկատի ենք ունենում
չունեւոր ժողովրդի մասսաները, որոնք տար-
բերում են ունեւոր փոքրամասնութիւնից: Ահա
հէնց այդ ժողովուրդը — աղքատ բանւորները,
պրոլետար դասակարգը պէտք է ինքն իրեն կառա-
վարէ: Պրոլետարիատը ումենուրեք կազմում է մե-
ծամասնութիւն: Այդ պատճառով միմիայն նրա
շահերը պէտք է վճահան դեր կատարեն: Մի-
միայն պրոլետարիատը պէտք է կառավարի հաս-
րակութիւնը, բուրժուական փոքրամասնութեան
շահերն ամենեին հաշւի չպէտք է պահեն: Այդ
շահերն անկարելի է հաշւի առնել ճիշտ այնպէս,
ինչպէս անհնարին է կանգնել ակֆորմիտների այն
տեղակէտի վրայ, թէ բուրժուական հասարակու-
թեան մէջ հնարաւոր է պրոլետարիատի դուրսեան
մասնակի բարեկաւումը:

Մենք առաջ էլ կրիտիկայի էինք ենթադրում
ընդհանուր բնորոշական իրաւունքի սկզբունքը:
Մենք առում էինք՝ մարդիք հաւասար չեն, հետե-
ւարաբ նրանց ձայներն էլ չեն կարող հաւասար-
արժէք լինել: Նա ով չի աշխատում ու գոյու-
թիւն ունի միմիայն շնորհիւ իր կապիտալի հան-
գիտանում է հասարակութեան պարագիտ: Ուստի
նա չպէտք է ունենայ հաւասար վճառաւ ձայն

այն բանու: Կ'ա որի աշխատանքը պահպանում է
հասարակութիւնը: Ինչ որոշ չափով կարելի է ան-
ւանել էթիքական գաղափար: Բայց մենք կարող
ենք ասել այլ կերպ — մեր նպատակը, հասարակու-
թեան սոցիալիստական յեղաշրջումն է. դա այն-
քան հակառում է բուրժուակալի շահերին, որ
վերջինս կաշխատի իր ունեցած ուժերի չափ, խան-
գարել սոցիալիստական կազմակերպութեան գոր-
ծին: Տուն շինելու ժամանակ ո՞վ կվարձի այնպիսի
մարդկանց, որոնք շինելու փոխարէն կամենում են
քանդել տունը: Եթէ բանւորները պարզ ըմբռնեն, որ
նրանք իրենց քաղաքական իշխանութիւնը պէտք
է օգտագործեն յօգուտ սոցիալիզմի այդ դէպքում
դա բացատրում է ամեն մի համաշխատակցու-
թիւն բուրժուակալի հետ. այդ դէպքում կապի-
տալի շահերի մասին խօսք էլ չի կարող լինել:
Անշուշտ, դա ձեւեղանօրէն զեմօկրատիայ չէ, սա-
կայն իրապէս, դա ամենալաւ զեմօկրատիան է,
բանւորների զեմօկրատիան, որը պաշտպանում է
մասսաների կենսական շահերը:

Ինչ այն կազմն է, որ Կ. Մարքսը անւանում էր
պրոլետարիատի դիկտատուրա՝, որն առաջ անւա-
նում էին կոմունիզմ, իսկ այժմ բոլշևիզմ: Այդ
կազմը ներկայումս ամենալայն կերպով կիրաւում
է Ռուսաստանում: Իսկ դրա սկիզբը 1871 թ. Փարի-
զի կոմունան էր: Այն, ինչ որ Ռոսսաստանում ներ-

կայումս կատարուած է, լիշեցնուած է Փարիզի կամ-
 փունան, սակայն աւելի կատարեալագործուած ձեռքի
 Բանւորական պատգամաւորների Խորհուրդները,
 քաղաքներում—գիւղացիական խորհուրդները գիւ-
 ղերում, այն տարրերն են, որոնցից կազմուած է
 կառավարութիւնը:

Քաղաքային վարչութիւնը բնարուած է քա-
 ղաքների բանւորական խորհուրդների կողմից, Ար-
 գիւնադործութեան որոշ ճիւղի Փարբիկանների բան-
 ւորական խորհուրդները բնարուած են այն կառա-
 վարութիւնը, որը պիտի ղեկավարէ այդ ճիւղի
 գործերը երկրում: Բոլոր խորհուրդների համագու-
 մարը, որը հաւաքուած է ժամանակ առ ժամանակ
 որոշում է երկրի բնականուր քաղաքականութիւնը:

Սմենն մի առանձին ճիւղի՝ արդիւնաբերու-
 թեան, պարենաւորման, արանսպարտի, առողջապա-
 հութեան և ժողովրդական կրթութեան գործերը
 քննելու համար հաւաքուած են առանձին համաժո-
 ղովներ, ուր տեղական խորհուրդները ռւղարկուած
 են իրենց պատգամաւորներին, որպէսզի մշակեն
 բնականուր միջոցներ և կարգադրութիւններ: Այդ
 միշտ շարժուն ապարատը ուսու ժողովուրդը
 սանդղէկ է, որովհետեւ ձգտել է նոր հասարակական
 կարգեր հիմնել:

Այդ ապարատը— պրոլետարական գիկտա-
 տուրայի օրգանն է, որովհետեւ բուրժուազիտան այդ-

տեղ ոչ մի մասնակցութիւն չունի: Բուրժուազիա-
 ցին զրկել են բնարական իրաւունքներից և ար-
 տաքսի պետական օրգաններից ոչ թէ արհեստա-
 կան կերպով: Ո՛չ, նրա համար պարզապէս այդ
 կազմակերպութեան մէջ տեղ չի մտած: Խնդիրը
 նրանումն է, որ այդ կառավարութեան ապարատն
 լինուած է, ո՛չ թէ միայն ճարգեանց վրայ այլ և
 աշխատանքի: Նա, ով չի աշխատուած չի կարող ադ-
 դել և երկրի գիտակի վրայ: Նախկին վերատեսու-
 չը կամ Փարբիկայի տէրը, որը համաձայն է կատարել
 տեխնիկական ղեկաւարի դեր բանւորական խոր-
 հուրդների հօնարօջի տակ, կարող է միւս
 բանւորների հետ միասին կառավարել Փարբիկան
 Աղաա պրօֆէսիայի մարդիկ—բժիշկները, ուսու-
 ցիչները, նկարիչները, կազմուած են իրանց սեփա-
 կան խորհուրդները, որոնք որոշում են իրենց կե-
 տաքքրքրոյ խնդիրները: Այդ խորհուրդների անդամ-
 ները միացած են մասսաների հետ շատ սերտ կեր-
 պով, որովհետեւ նրանք պարբերաբար ելնում են
 և փոխարինուած են նորերով: շնորհիւ զրան նոր
 բիւրօկրատիա չի կարող ստեղծուել: Դա իրապո-
 ժեի է, որովհետեւ մարդիկ ձգտում են սովորել
 և միւսներին սովորեցնել: այդ պատճառով ան-
 հրաժեշտ բնուականութիւններն ու զիտութիւնները
 զաղարում են առանձին մարդկանց մենաշնորհ լի-
 նելու: Բննելով ժողովրդի այդ խիտական ինքնավա-

բութիւնք, կարելի է պարզորոշ տեսնել թէ որքան քիչ է նպաստել ժողովրդական իշխանութեանը նոյն իսկ ամենադեմոկրատիկ պարլամենտը: Նա միայն կարող է ստեղծել պարլամենտարների հառափարութիւն: Չորս տարւա ընթացքում մի անգամ կամ թէկուզ հէնց տարին մի անգամ, ընտրութիւնների ժամանակ պարլամենտների անդամները պետք է լիազօրութիւն օտանան ժողովրդից: Չենթարկելով մասսաների անմիջական ազդեցութեանը, ազդելով միմիայն միմեանց վրայ պարլամենտի անդամները իշխում են ամբողջ օրէնսդրական պէրիօդի ընթացքում, արտասանում են երկարագոյն հառեր և հաստատում են օրէնքներ: Գեղեցիկ հառերի, խոստումների և ծրագրների շնորհիւ նրանք օրսում են ձայներ և այդ գէպքում արգէն դրանք դառնում են իշխաններ:

Սակայն դրանք միմիայն առաջին հասցեքից են ամենափարոզ երեւում իրապէս բարձր կառավարութիւնը գտնւում է լինովնիկների և բիւրօկրատիայի ձեռքում, օրոնք իբրև կառավարիչներ կառավարում են և իշխում: Վարչական և օրէնսդրական իշխանութեան յայտնի բաժանումը դեմոկրատիք հանրապետութիւնների մէջ մի միջոց է միայն որ հնարաւորութիւն է տալիս իշխելու մասսաների վրայ: Մասսաներին հաւատացնում են, թէ նրանք իրենք են կառավարում իրենց գործերը:

այնինչ իրապէս այդ կերպ ամբասնում է կապիտալի տիրակալութիւնը:

Ճրանօրայում, Ամերիկայում ու Շվեյցարիայում, չնայած նրան, որ այդտեղ դոյութիւն ունի դեմոկրատիա՝ մասսաները գտնւում են կապիտալի իշխանութեան ներքոյ և ճնշւում են կապիտալի կողմից:

Չնայած ընդհանուր ընտրողական իրաւունքին, մասսաները բոլորովին անօյժ են և չեն կարող փոփոխել իրենց գրութիւնը: Նրանք ենթարկւում են այն արևեստակոն մեքենայի ճնշմանը, որը կազմւած է պարլամենտական կառավարութիւնից և աստիճանաւորներից: Միայն ժամանակ առ ժամանակ, ընտրութիւնների ընթացքում նրանք կարող են ունենայ, որոշ ազդեցութիւն, բայց այդ օրերին ևս ընտրողական հառերի և ծրագրների ազդեցութեան ներքոյ նրանց կամքը կարող է միայն արտայայտել սչ լրիւ կերպով: Եթէ նոյն իսկ ընտրւած պարլամենտարները անկեկծօրէն կամենան էլ ժողովրդի կամքը հաշլի առնել նրանք նոյնիսկ այդ գէպքում էլ շուտով սուղւում են պարլամենտական հանձնի, հուսակցութեան գիւցիպլինայի, բանսարկութեան և շատախօսութեան մէջ: Իսկ «պարլամենտական» կառարարութիւնը, որը բազկացած է հուսակցութեան պարագլուխներից գառնում է ժողովրդից կտրւած և անկախ մի կառա-

փարութիւն: Այդ կառավարութիւնն իր հերթին
 չի կարող կուէլ ամուր պետական ընդունա-
 րանի կազմակերպութեան, վարչական իշխանու-
 թիւնների հետ, որոնք բոլորն ազգաբնակչութեան
 հետ ճիշտ այնպէս են վարուում, որպէս օտարերկ-
 րեայ նւաճողներ: Պարլամենտի տիրակալութիւնը
 սիմվոլն է այն պրոֆեսիոնալ քաղաքագէտների ո-
 րոնք երկար ու բարակ ճառերով կամենում են
 ապացուցել նրա անհրաժեշտութիւնը: Նրանք բոլ-
 շեկովից վախենում են: Բոլշեկովի դալուստը
 սպառնում է նրանց դուրսութեանը: Երբ երկար բա-
 րակ ճառերի փոխարէն անհրաժեշտ է գառնում
 գործնական աշխատանքը, այդ դէպքում, այդ մար-
 ղիք, լիրաւի աւերորդ են:

[Redacted text]

[Faint purple stamp or text, possibly a library or archival mark, partially obscured by a redacted area.]

Գին Կ՝ 2 բուլ.

« Ազգային գրադարան



NL0192162

